

9-րդ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԸՍՏ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ

«Քիմիա» առարկայի 9-րդ դասարանի ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում ուսումնական նոր չափորոշիչը՝ *ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ մարտի 30-ի N43- Ն հրաման, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Քիմիա» առարկայի 7-9-րդ և 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ»*, դպրոցական նոր և հին դասագրքերն ու գործող խնդրագրքերը:

1. «Քիմիա» առարկայի ավարտական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական նոր չափորոշիչի և ծրագրերի, որոնք կազմվել են ըստ հետևյալ հիմնական հինգ գաղափարների՝

1. Նյութի մասնիկային բնույթ՝ ատոմ և մոլեկուլ
2. Քիմիական կապ, կառուցվածք և հատկություններ
3. Քիմիական ռեակցիաներ
4. Էներգիայի պահպանման օրենք և թերմոդինամիկա
5. Կինետիկա և հավասարակշռություն

2. **Թեստի կառուցվածքը**

Թեստը ներառում է 32 առաջադրանք (35 միավոր):

1-ից 22-րդը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, որոնցում ընդգրկված են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և լաբորատոր աշխատանքները:

23-ից 29-րդը կարճ պատասխանով առաջադրանքներ են, որոնք ընդգրկում են հիմնական դպրոցի քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և լաբորատոր աշխատանքները, ըստ նոր ծրագրերի և չափորոշիչների:

Դրանց պատասխանները կարող են լինել թվեր, բառեր և բառակապակցություններ, սահմանումներ կամ մեկնաբանություններ:

30-րդ առաջադրանքը համապատասխանեցում է՝ կարճ պատասխանով: Այս առաջադրանքներում տրվում է երկու շարք: Անհրաժեշտ է համապատասխանեցնել այդ շարքերի միավորները և ստացված պատասխանները գրառել ձևաթղթի համապատասխան մասում

31-րդը և 32-րդը ընդարձակ պատասխանով առաջադրանքներ են:

Այս առաջադրանքները կատարելու համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը՝ պահանջվող քիմիական հավասարումներով, բանաձևերով, բոլոր քայլերի գրանցումով, հաշվարկներով և ստացված պատասխանով: 31-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (քայլը՝ մեկ միավոր), 32-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 3 միավոր (քայլը՝ մեկ միավոր):

3. Միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 22 միավոր
2. կարճ պատասխանով առաջադրանքներ՝ 8 միավոր
3. ընդարձակ պատասխանով առաջադրանքներ՝ 5 միավոր